

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՅԱՆ

պատմական գիյր. դոկյրոր, ՀՊՄՀ, ԱԻ

«ԳԻՆԻ» ԲԱՈՆ ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ՝

«Անարին զոհաբերություններն ու գինին
Տիրոջը մատուցուած անուշահոտ բուրմունք են»
(Ղևտ. ԻԳ. 18):

Ուրարտերեն *haluli* բառը թարգմանվում է իբրեւ խաղող, խաղողի որթ², հմմտ. հայ. խաղող-ը՝ նույն նշանակությամբ³: Մյուս կողմից, ուրարտական մի քանի արձանագրությունների⁴ համատեքստը

¹ Հողվածը հրատարակվում է ՀՀ ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորման 15T-6D369 գիտական թեմայի շրջանակներում: Օգտվելով առիթից՝ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Արմեն Պետրոսյանին և Հրաչ Սարտիրոսյանին՝ հողվածը քննարկելու և կարելու դիտարկումներ անելու համար:

² Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001, с. 445. М. Salvini, I. Wegner, Einführung in die urartäische Sprache, Wiesbaden, 2014, S. 109:

³ ՀԱԲ հ. 2, էջ 321-322: Ուրարտերեն *haluli*-ի հետ համադրության համար տևս, դեռևս, J. Sandalgian, Les inscriptions cunéiformes urartiques, 1900, Venise, էջ 370: Տես նաև Н. Мкртчян, Субстратные названия растений в армянском языке, “Древний Восток”, 1983, 4, Ереван, էջ 27: Հստակ չէ *haluli*-ի կապը արքայերնում վկայված *hallulē*, *hallulū/ia* «խնդրույս, դեղամիջոց» բառի հետ: Տես Chicago Assyrian Dictionary (այսուհետև՝ CAD), vol. 6 (H), Chicago, 1956, էջ 46 (*hallulaja*):

⁴ Հմմտ. КУКН, 122, М. Salvini, Corpus dei testi urartei, vol. I (այսուհետև՝ CTU I). Le iscrizioni su pietra e roccia: I Testi, “Documenta Asiana”, VIII/1, Roma, A 5-87₃; A 5-88₃; A 12-1 IV₁₀; A 12-1 V₅₋₁₁ տեքստերը: Բանասիրական դիտարկումների համար տևս և հմմտ. I. M. Diakonoff, On Some New Trends in Urartian Philology and Some New Urartian Texts, “Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge”, 1989, Bd. 22, էջ 87. М. Salvini, The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduru=kai): Cuneiform and Hieroglyphic, in: А. Çilingiroğlu, М. Salvini (eds.), Ayanis I. Ten Year's Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998, “Docu-

մղում է մտածելու, որ *ḫaluli*-ն նշանակել է նաեւ ինչ-որ խմիչք, միգուցե՝ «գինի»։ Ինչպես Հայտնի է, խաղող եւ գինի բառերը բազմաթիվ լեզուներում նույնանում են⁵։ Որպես ասվածի օրինակ՝ կարելի է նշել աքքադերեն *ka/iṛānu*-ն, որը նշանակում է թե՛ «գինի», թե՛ «խաղող» եւ թե՛ «խաղողում»⁶։

Մյուս կողմից, ուրարտերենում ^{(GİS)uldi/GİSuduli} (= ^{GİS}GESTIN⁷) «խաղողի որթ/այգի, խաղողում» բառը/բառերը ^(^o)⁸ ամենեւին չի/չեն հիշեցնում *ḫaluli*-ն եւ երբեւէ չի/չեն կիրառվել նրա փոխարեն։ Հետաքրքիր է, որ *ḫaluli*-ն եւս երբեք չի հանդիպում ^{GİS} ցուցիչով, ինչը կարող է հուշել, որ այն բույս չէր։ Փոխարենը, Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության 5-րդ հատվածում այդ բառերը հանդիպում են միասին՝ ^{GİS}GESTIN *ḫa-lu-li*⁹, որը կարելի է թարգմանել ինչպես «խաղողի այգու խաղող», այնպես էլ՝ «խաղողի որթի գինի»։ Սա մղում է մտածելու, որ ^{(GİS)uldi/GİSuduli}-ն նշանակել է ոչ միայն «խաղողի որթ», այլեւ, միգուցե, ունեցել է ընդհանրական իմաստ՝ «թփուտ, սողացող բույս»։ Հմմտ. ուգարիթ. *gpr* «խաղողի որթ, խաղողում» բառը¹⁰, որի համար ենթադրվում է նաեւ «թփուտ», «սողացող կամ մագլցող բույս», ինչպես նաեւ՝ «վայրի խաղող» իմաստը¹¹։ Այստեղ տեղին է հիշել ^{(GİS)uldi/GİSuduli} հայ. փոխ համադրությունը։

menta Asiana», VI, Roma, 2001, էջ 261-262. Ն. Վ. Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ ուրարտական սեպագրում, ՄԱԵԺ, Երևան, 2004, պրակ 23, էջ 378-379. N. V. Harutyunyan, New Readings and Interpretations in Urartian Cuneiform Inscriptions, «Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies», vol. 3/1, Yerevan, 2008, էջ 71-72.

⁵ T. V. Gamkrelidze, V. V. Ivanov, Indo-European and the Indo-Europeans: A Reconstruction and Historical Analysis of a Proto-Language and a Proto-Culture, Parts I-II, Berlin - New York, 1995, p. 559-560.

⁶ CAD, vol. 8 (K), Chicago, 1971, էջ 202 և հաջորդիվ (*karānu*).

⁷ KYKH, էջ 472. M. Salvini, I. Wegner, նշվ. աշխ., էջ 114:

⁸ Ի տարբերություն այլ հեղինակների՝ Իգոր Դյակոնովը չի նույնացնում դրանք և ի դեմս ^{(GİS)uldi} և ^{GİSuduli} բառերի տեսնում է իմաստով մոտ, բայց տարբեր նշանակություն ունեցող տերմիններ։ Տե՛ս I. Diakonoff, On Some New Trends in Urartian Philology..., էջ 86 և ծնթ. 41: Այդ նույնը վերաբերում է Գրիգոր Ղափանցյանին, ով ուրարտ. ^{(GİS)uldi}-ն թարգմանում էր որպես «խաղող, խաղողի այգի», իսկ ^{GİSuduli} բառին վերագրում էր «գինի» նշանակությունը։ Տե՛ս Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը (Հետազոտություն ըստ բնեռագիր աղբյուրների), Յերեվան, 1940, էջ 58: Իհարկե, այս վերջին բառին տրված ^{GİS} ցուցիչը բացառում է նման հնարավորությունը։

⁹ CTU I, A 12-1 V₉.

¹⁰ G. del Olmo Late, J. Sanmartín, A Dictionary of the Ugaritic Language in the Alphabetic Tradition. Part One: [ʾ(a/i/u - k)], «Handbuch der Orientalistik», Bd. 67, Leiden - Boston, 2003, p. 304:

¹¹ G. J. Botterweck, H. Ringgren (eds.), Theological Dictionary of the Old Testament, vol. III, Michigan (reprinted 1997), էջ 55 և հաջորդիվ. J. M. Sasson, The Blood of Grapes: Viticulture and Intoxication in the Hebrew Bible, in: L. Milano (ed.), Drinking in Ancient Societies: History and Culture of Drinks in the Ancient Near East, «History of the Ancient Near East,

Վերջինս նշանակում է «վայրի խաղող»¹²: Հնարավոր է՝ «խաղողի տունկ, որթատունկ» իմաստն է ունեցել ուրարտական տեքստերում խաղողի այգի հիմնելու կապակցությամբ միայն մեկ անգամ վկայված ^{GIS}urtani բառը¹³, հմմտ. հայ. որթ-ը՝ «խաղողի տունկ, որթատունկ»¹⁴: Ինչպես մեզ հուշեց Հրաչ Մարտիրոսյանը, հայ. որթ բառը կարող է լինել «միջերկրածովյան» տարածքի ենթաշերտային բուսանուն՝ հուն. զուգահեռներով¹⁵:

Գյուղակից գտնված արձանագրություններից մեկը նույնպես խոսում է *ḫaluli*-ի՝ որպես գինի կամ ինչ-որ խմիչք դիտարկելու օգտին: Իշպուլինիի որդի Մենուայի կողմից թողնված արձանագրության մեջ, շինարարական այլ գործունեություններից բացի, նշվում է նաև խաղողի այգի հիմնելու մասին, որը կրելու էր արքայի անունը: Տեքստը եզրափակվում է ինչ-որ ծեսի մասին նշումով, որը պետք է իրականացվեր, «երբ խաղողի այգին հասունանա/(բերքը) հավաքվի» (*a-še ^{GIS}ul-di l[e]-šú-li-e*)¹⁶: Ծեսի ընթացքում իրականացվելու էր կենդանիների զոհաբերություն *ḫwalu*-ի աստվածությունը (GUD 3 UDU *ḫal-di-e [u]r-bu-ú-li-i-ni*)¹⁷, ապա մատուցվելու էր նաև *ḫaluli*՝ թե՛ «խաղողի դարպասում, թե՛ կոթողի առջև» (*[h]a-lu-li áš-ḫu-li-ni e-ʾa ^ḫal-di-na-a K[Á] e-ʾa pu-lu-si-ni-ka-i*)¹⁸:

«*ḫwalu*-յան դարպաս»-ի եւ կոթողի հիշատակությունը չափազանց կարեւոր է, քանի որ ուրարտական պատկերագրությունը հուշում է, թե հատկապես ինչ ծես է իրականացվել դրանց առջև. դա հեղման ծեսն է (Աղ. I/1-2, 5-6)¹⁹: Հետաքրքիր է նաև, որ նշված արձանագրության հաջոր-

Studies”, vol. 6, Padova, 1994, էջ 401 և ծնթ. 7. I. K. H. Halayqa, A Comparative Lexicon of Ugaritic and Canaanite, “Alter Orient und Altes Testament”, Bd. 340, Münster, 2008, էջ 138:

¹² Համադրության համար տե՛ս, դեռևս, Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 57: Տե՛ս նաև Н. Мкртчян, նշվ. աշխ., էջ 35:

¹³ CTU I, A 9-115. Հմմտ. КУКН 273, ծնթ. 4: Sh’u, սակայն, M. Salvini, Corpus dei testi urartei, vol. III, Tavole, “Documenta Asiana”, VIII/3, Roma, 273 էջում հրատարակված լուսանկարը:

¹⁴ ՀԱԲ, հ. 3, էջ 579-580:

¹⁵ Այս մասին տե՛ս, մասնավորապես, H. K. Martirosyan, The Place of Armenian in the Indo-European Language Family: the Relationship with Greek and Indo-Iranian, “Journal of Language Relationship”, vol. 10, Moscow, 2013, էջ 115:

¹⁶ КУКН 82₂₄. CTU I, A 5-33₂₄. Թարգմանության համար տե՛ս և հմմտ. М. Л. Хачикян, Хурритский и урартский языки, “Хурриты и урарты”, т. 2, Ереван, 1985, էջ 51, ծնթ. 14. G. Wilhelm, Urartian, in: R. D. Woodard (ed.), The Cambridge Encyclopedia of the World’s Ancient Languages, Cambridge, 2004, էջ 132. M. Salvini, I. Wegner, նշվ. աշխ., էջ 62:

¹⁷ КУКН 82₂₅₋₂₆. CTU I, A 5-33₂₅₋₂₆:

¹⁸ КУКН 82₂₇₋₂₉. CTU I, A 5-33₂₇₋₂₉:

¹⁹ C. F. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-historische Klasse, Neue Folge 9/3, Berlin, 1907, S. 82 (Fig. 54). C. Işık, Neue Beobachtungen zur Darstellung von Kultszenen auf urartäischen Rollstempelsiegeln, „Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts“, Bd. 101, Berlin, 1986, Abb. 2a. Տե՛ս նաև N. Çevik, Hayat Ağacı’nın

դեղ տողերում խոսվում է մեկ այլ արարողություն/տոնակատարություն մասին, որը պետք է իրագործվեր, «երբ նոր գինին հանվի (^բ)», հավանաբար, երբ խաղողը ճզմվի [a]-še GESTIN^[MES] [šú]-ú-hi-e ʾa¹-hu-li-e)²⁰: Արարողություն/տոնակատարությունն իրականացվելու էր Խալդի աստվածուհի Համար «խալդյան դարպաս»-ում, Վարուբանի աստվածուհու Համար եւ «Խալդիի կոթողի» առջեւ (qar-me-hi ʿhal-di-e áš-hu-li-ni ʿhal-di-i-na-a KÁ [q]ar-me-hi ʾa-ru-ba-ni [qa]r-me-hi ʿhal-di-i-e [p]u-ú-lu-si-ni-ka-i)²¹: Այս առումով կարելի է հարց բարձրացնել, թե արդյո՞ք ուրարտական կոթողների առջեւ տնկված/կանգնեցված պաշտամունքային ծառը խաղողի թուփի չէր կամ չէր խորհրդանշում այդ բույսը (Աղ. I/1-3, 5; II/1-2):

«Նոր գինու» (GESTIN^{MES} šu^he) հիշատակությունը շատ հետաքրքիր է այն առումով, որ այստեղ խոսքը ոչ թե գինու, այլ, ամենայն հավանականությամբ, խաղողի հյութի՝ քաղցուի մասին է: Տարածաշրջանի հին լեզուներում նոր գինի տերմինը վերաբերում է խաղողի հյութին, հմմտ., օրինակ, ուգարիթ. *mrt* «նոր գինի, քաղցու»²², հին եգիպտ. *mrs.w* «նոր գինի, քաղցու»²³, հին հուն. *τρούξ* «նոր գինի, քաղցու»²⁴, եբր. *mērit* «թարմ չֆերմենտացված խաղողի հյութ»²⁵, *tūrôš* «նոր գինի, քաղցու կամ մաճար»²⁶ եւն: Ըստ այդմ, միանգամայն հնարավոր է թվում, որ *haluli*-ն բացի «խաղող»-ից՝ նշանակեր նաեւ «խաղողի նոր քամած հյութ, քաղցու»:

Ինչպես երեւում է, Գյուզակի արձանագրության տեքստը վերաբերում է ոչ միայն խաղողի բերքահավաքին, այլեւ՝ խաղողից հյութը քամելու/խաղողը ճզմելու տոնակատարությանը, որի ժամանակ խաղողի

Urtu Kült Törenlerindeki Yeri ve Kullanım Biçimi, "Anadolu Araştırmaları (JKIF - Jahrbuch für Kleinasiathe Forschung)", Cilt/Bd. 15, İstanbul, 1999, էջ 344 հաջորդիվ, Աղ. 6/e. A. Batmaz, A New Ceremonial Practice at Ayanis Fortress: The Urtian Sacred Tree Ritual on the Eastern Shore of Lake Van, "Journal of Near-Eastern Studies", vol. 72/1, Chicago, 2013, էջ 73 հաջորդիվ, նկ. 17-20, 28a-b, նն:

²⁰ KYKH 82³⁰⁻³¹. CTU I, A 5-33³⁰⁻³¹. Թարգմանության համար հմմտ. M. Salvini, I. Wegner, նշվ. աշխ., էջ 57:

²¹ KYKH 82³¹⁻³⁶. CTU I, A 5-33³¹⁻³⁶.

²² G. del Olmo Lete, J. Sanmartín, նշվ. աշխ., էջ 579:

²³ G. Takács, Etymological Dictionary of Egyptian, vol. 3: *m-*, "Handbuch der Orientalistik", Bd. 48/1, Leiden - Boston, 2008, էջ 441:

²⁴ Y. Duhoux 2007, Pre-Greek Languages: Indirect Evidence, in: A.-F. Christidis, M. Arapopoulou, M. Chriti (eds.), A History of Ancient Greek, from the Beginnings to Late Antiquity (English Translation), Cambridge, 2007, էջ 226:


²⁵ G. Takács, նշվ. աշխ., էջ 442:

²⁶ G. J. Botterweck, H. Ringgren (eds.), Theological Dictionary of the Old Testament, vol. VI, Michigan, 1990, էջ 61:

ԱՂՅՈՒՍԱԿ I



1




2




3



4



5



6

- Աղ. I/1-2. Կոթողների առջև իրականացվող հեղման ծեսի պատկերումով կնքադրոշմների զրջանկարներ (C. Işık, Neue Beobachtungen zur Darstellung von Kultszenen auf urartäischen Rollstempelsiegeln, “Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts”, Bd. 101, Berlin, 1986, էջ 3-4, նկ. 1, 2a)
- Աղ. I/3. Այանցի ուրարտական ամրոցի սրբարաններից մեկում հայտնաբերված «կենաց ծառի» վերակազմությունը (A. Batmaz, A New Ceremonial Practice at Ayanis Fortress: The Urartian Sacred Tree Ritual on the Eastern Shore of Lake Van, “Journal of Near Eastern Studies” 72/1, 2013, էջ 77, նկ. 28b)
- Աղ. I/4. Ալթին-թեփեի ուրարտական ամրոցի բացօթյա սրբավայրի վերակազմությունը (T. Özgüç, Altintepe II: Mezarlar, Depo Binası ve Fildiş Eserler / Tombs, Storehouses and Ivories, Ankara, 1969, նկ. 29)
- Աղ. I/5. Կոթողների առջև իրականացվող հեղման ծեսի վերակազմություն (N. Çevik, Urartu Kaya Mezarları ve Ölü Gömme Gelenekleri, Ankara, 2000, աղ. 80/f)
- Աղ. I/6. Կոթողների առջև իրականացվող հեղման ծեսի վերակազմություն (C. Işık, նշվ. աշխ., էջ 21, նկ. 13)

ԱՂՅՈՒՄԱԿ II



- Աղ. II /1-2. «Կենսաց ծառի» առջև արքայի եւ արքայազնի (՝) կողմից իրականացվող հեղման ծեսի պատկերումով կնքադրոշմը եւ գրչանկարը (**M. Salvini**, *The Inscriptions of Ayanis (Rusaḫinili Eiduru=kai): Cuneiform and Hieroglyphic*, In **A. Çilingiroğlu, M. Salvini** (eds.), *Ayanis I. Ten Year's Excavations at Rusaḫinili Eiduru-kai 1989-1998*, "Documenta Asiana" VI, Roma, 2001, էջ 317-318, նկ. 8/բ.)
- Աղ. II /3-4. Աստվածների առջև իրականացվող հեղման ծեսի պատկերումով շումերական դարաշրջանի կնքադրոշմների գրչանկարներ (**J. Black, A. Green**, *Gods, Demons and Symbols of Ancient Mesopotamia. An Illustrated Dictionary*, London, 1992, էջ 52, նկ. 45, էջ 117, նկ. 95)
- Աղ. II /5-6. Նորշումերական շրջանի Ուրի արքա Ուր-Նամմուի կողողից բեկորներ եւ պատկերագրության վերակազմությունը՝ աստվածությունների առջև իրականացվող հեղման ծեսի պատկերումով (**L. Woolley**, *Ur Excavations*, vol. VI. *The Buildings of the Third Dynasty*, London and Philadelphia, 1974, աղ. 42/с-d, 43/а)
- Աղ. II /7. Աստվածությունների առջև իրականացվող հեղման ծես պատկերող բարձրաքանդակ Մալաթիայից, ուշխեթական շրջան (**W. Orthmann**, *Untersuchungen zur Späthethitischen Kunst*, Bonn, 1971, աղ. 41/բ.)

ԱՂՅՈՒՍԱԿ III



1



2




3



4



5



6



Աղ. III /1-3. Ծիսական անոթ՝ աստվածությունների առջև իրականացվող հեղման ծեսի պատկերումով, նորխեթական շրջան (Courtesy of **The Metropolitan Museum of Art**, Department of Ancient Near Eastern Art. “Animals in Ancient Near Eastern Art”. In Heilbrunn Timeline of Art History. New York: The Metropolitan Museum of Art, 2000. http://www.metmuseum.org/toah/hd/anah/hd_anah.html (February 2014), գրչանկարը՝ **H. G. Güterbock**, **T. Kendall**, A Hittite Silver Vessel in the Form of a Fist, In **J. B. Carter**, **S. P. Morris**, *The Ages of Homer: A Tribute to Emily Townsend Vermeule*, Austin, TX, 1998, էջ 54, նկ. 3.8)

Աղ. III /4-6. Ծիսական անոթ՝ աստվածությունների առջև իրականացվող հեղման ծեսի պատկերումով, նորխեթական շրջան (Courtesy of **The Museum of Fine Arts**, Boston, Ancient Near East Gallery (Gallery 110), www.mfa.org, գրչանկարը՝ **H. G. Güterbock**, **T. Kendall**, նշվ. աշխ., էջ 52, նկ. 3.7)

ԱՂՅՈՒՍԱԿ IV



1



2



3

- Աղ. IV /1. Խաղողի բերքահավաք, հնձան եւ «նոր գինու» ստացումը պատկերող եգիպտական որմասնկար, Նոր թագավորություն, 18-րդ հարստության շրջան (N. de Garis Davies, The Tomb of Nakht at Thebes, New York, 1917, աղ. 26)
- Աղ. IV /2. Պաշտամունքային կործողների առջև իրականացվող հեղման ծեսի պատկերագրություն սարկոֆագի վրա, Կրետե, ուշմիտության շրջան (P. L. Martino, The Hagia Triada Sarcophagus: Interconnections between Crete and Egypt in the Late Bronze Age, Thesis submitted to the Faculty of the Graduate School of the University of Maryland, College Park, 2005, էջ 67, նկ. 3)
- Աղ. IV /3. Հեղման ծեսի պատկերումով որմասնկար, Աթենք, Արխայիկ շրջան (M. Gaifman, Visualised Rituals and Dedicatory Inscriptions on Votive Offerings to the Nymphs, “Opuscula” 1, 2008, էջ 89, նկ. 1)

Հյուլթի առաջին բաժինը հեղվել է գերագույն աստվածություն²⁷: Նման տոնակատարություն հայտնի էր Ասորեստանից, ուր արքան գինին ճգմելուց հետո Աշշուր աստվածությանն էր ընծայում «լավագույն մասը»²⁸: Ուգարիթում նոր տարին նշվում էր աշնանային գիշերահավասարից հետո, առաջին՝ «նոր գինու ամսին» (yrh r'is yn), իսկ տոնակատարության ընթացքում Բահալին էր մատուցվում խաղողի փրփրացող Հյուլթը²⁹: «Նոր գինու» (me-tu-wo ne-wo) ամսվա տոնակատարությունը նշվել է միկենյան աշխարհում³⁰ եւ այլուր (Աղ. II/3-7; III/3, 6; IV/2-3):

Փաստացի, ուրարտական տեքստերի գիվանում գինի բառը կարելի է ճանաչել բացառապես գաղափարագիր գրությունը՝ GEŠTIN^(MES): Տեքստերից մեկում աստվածների համար նախատեսված զոհաբերվելիք կենդանիներից հետո նշվում է նաեւ «6 փրսի գինի» (մոտ 165 լ)³¹: Երկրորդ տեքստում հիշատակվում է շատ ավելի մեծ քանակություն՝ 111 aqarqi գինի (մոտ 30.5 հազ. լ), որը, հավանաբար, նախատեսված էր բանակի համար³²: Հնարավոր է՝ գինու մասին է խոսվում նաեւ Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության 5-րդ հատվածում, ուր քիչ հասկանալի տեքստում հանդիպում է GEŠTIN.NA գաղափարագիրը³³:

²⁷ Խալդիի՝ իբրեւ զինու աստվածության պաշտամունքի եւ ծեսերի համար տնւ եւ հմնտ. Ս. Պետրոսյան, Գնունի նախարարական տոհմի եւ զինու պաշտամունքի շուրջ, ՊԲՀ, 1999, թ. 2-3, էջ 181-183. Ա. Ե. Պետրոսյան, Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ, ՊԲՀ, 2006, թ. 2, էջ 261 եւ հաջորդիվ: Ուրարտում խաղողի հասունացման ու քերքահավաքի հետ կապված տոնի գոյության մասին տնւ Ս. Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 76-78. S. Hmayakyan, L. Simonyan, Elements of Folk Calendar and Rites in Urartian Inscriptions, in: A. Kosyan, Y. Grekyan, A. Bobokhyan (eds.), The Black & the White: Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan in Occasion of His 65th Birthday, "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies", vol. 8/1-2, Yerevan, 2013-2014 [2014], էջ 201:

²⁸ A. K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. II, Toronto - Buffalo - London, էջ 252 (A.0.101.17: 8b-10a).

²⁹ E. Lipiński, The Socio-Economic Condition of the Clergy in the Kingdom of Ugarit, in: M. Heltzer, E. Lipiński (eds.), Society and Economy in the Eastern Mediterranean (c. 1500-100 B.C.). Proceedings of the International Symposium held at the University of Haifa from the 28th of April to the 2nd of May 1985, "Orientalia Lovaniensia Analecta", vol. 23. Leuven, 1988, p. 140-141: Տնւ նտւ J. M. Sasson, նշվ. աշխ., էջ 403:

³⁰ S. Sherratt, Feasting in Homeric Epic, in: J. C. Wright (ed.), The Mycenaean Feast, Princeton, 2004, էջ 203:

³¹ КΥΚΗ 407 обоп. стор.₂₃. CTU I, A 11-1 V₀₂₃.

³² КΥΚΗ 241G₁₀. CTU I, A 9-3 VII₁₀.

³³ CTU I, A 12-1 V₁₀. Հրատարակչի մոտ՝ GEŠTIN-na:

GEŠTIN^(MEŠ) գաղափարագրի հնչյունագիրը գրությունը ուրարտական տեքստերում հայտնի է, այդ դերին էլ հավանում նաեւ *haluli*-ն, քանի որ առայժմ չկա որեւէ օրինակ, որտեղ GEŠTIN^(MEŠ) գաղափարագիրը կփոխարիներ *haluli*-ին: Այդ դեպքում արդյո՞ք կարելի է *haluli*-ին վերագրել «գինի» նշանակութիւնը, եթե, իհարկե, խոսքն այստեղ գինու ինչ-որ տեսակի, քաղցուրի կամ մածարի մասին է:

Ուրարտերեն *haluli*-ի «գինի» մեկնաբանությանը կարող է հակասել նաեւ այն փաստը, որ «գինի» բառն ունի, այսպես կոչված, «միջերկրածովյան»³⁴ կամ, որ առավել հավանական է, հնդեվրոպական ընդհանուր հետնախորք³⁵ եւ եթագրելի է, որ խուռի-ուրարտերենում այն եւս ունենալու էր մի ձեւ, որը պետք է մոտ լիներ տարածաշրջանի հին լեզուներում վկայված ձեւերին. հմտ. *իեթ. wian(a)*, *սեպ. լուվ. wini(ya)*, *հիեթ. լուվ. wa/i yana*-³⁶, *միկենյան հուն. wo-no*³⁷, *հին հուն. (F)οἶνος*³⁸, *աքք. inu*³⁹, *ուգարիթ. yn* (*yênu* < **yaynu* < **waynu*)⁴⁰, *եգիպտ. wns*⁴¹, *քարթվ. *γwino*-⁴², *հայ.*

³⁴ J. Clackson, The Genesis of Greek, in: A.-F. Christidis, M. Arapoglou, M. Chriti (eds.), A History of Ancient Greek, from the Beginnings to Late Antiquity (English Translation), Cambridge, 2007, էջ 191-192: Հմտ. J. A. C. Greppin, Did the Good Wines Come from Armenia?, "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies", vol. 3/1, Yerevan, 2008, էջ 48 և հաջորդիվ:

³⁵ Գինի բառի հնդեվրոպական ծագման համար տե՛ս T. V. Gamkrelidze, V. V. Ivanov, նշվ. աշխ., էջ 557-558. R. S. P. Beekes, Comparative Indo-European Linguistics. An Introduction (Second Edition), Amsterdam - Philadelphia, 2011, էջ 36. H. K. Martirosyan, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, "Leiden Indo-European Etymological Dictionary", vol. 8, Leiden - Boston, 2010, p. 214: Քննարկման համար տե՛ս նաև D. H. Hester, Recent Developments in Mediterranean "Substrate" Studies, "Minos" 9/2, 1968, 223-224. Y. Duhoux, նշվ. աշխ., էջ 226 և հաջորդիվ, ևս:

³⁶ H. C. Melchert, Cuneiform Luvian Lexicon, "Lexica Anatolica", vol. 2, Chapel Hill, N.C., 1993, էջ 269. A. Kloekhorst, Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon, "Leiden Indo-European Etymological Dictionary", vol. 5, Leiden - Boston, 2008, էջ 1012:

³⁷ M. Ventris, J. Chadwick, Documents in Mycenaean Greek, Cambridge, 1956, էջ 412:

³⁸ R. S. P. Beekes, Etymological Dictionary of Greek, "Leiden Indo-European Etymological Dictionary Series", vol. 10/1, Leiden - Boston, 2010, էջ 1058.

³⁹ G. del Olmo Lete, J. Sanmartín, նշվ. աշխ., էջ 969:

⁴⁰ J. Huehnergard, An Introduction to Ugaritic. Peabody, MA, 2012, էջ 160. G. del Olmo Lete, J. Sanmartín, նշվ. աշխ., էջ 968-969:

⁴¹ M.-Ch. Poo, Wine and Wine Offering in the Religion of Ancient Egypt, London - New York, 1995, էջ 27.

⁴² G. A. Klimov, Etymological Dictionary of the Kartvelian Languages, Berlin - New York, 1998, էջ 227.

գինի⁴³ եւն (տե՛ս նախահնդեվրոպական *w(e/o)in-o կամ *wóinom⁴⁴ եւ նախասեմական *wain նախաձեւերը⁴⁵):

Սարգսուրի Արգիշտորդու Քարաթաշի արձանագրությունը Հայտնում է արքայի անունը կրող խաղողի այգու Հիմնադրման մասին: Արձանագրությունն ունի «արգելանք»-ի բանաձեւ՝ ապագա արքայի կողմից այգու անվանումը չփոխելու պահանջով, իսկ տեքստը եզրափակվում է «անեծքի բանաձեւ»-ով՝ ուղղված նրան, «ով յուրացնի (եւ) *ú-ni* մշակի» (... a-[l]u-še ha-ú-li-e ú-ni ú-ru-li-e)⁴⁶:

Արգիշտիխինիլի ընդարձակ, բայց խիստ պակասավոր պաշտամունքային տեքստում նույնպես հանդիպում է *ú-ni* բառը: Մի դեպքում այն նշվում է քրմերի խմբի առջեւ (*ú-ni*¹⁰ ur-bi-ka-ni-ka-a-i)⁴⁷, ովքեր պետք է ինչ-որ գործողություն կատարեին (*ú-ni*¹⁰ ur-bi-ka-a-še...)⁴⁸, մեկ այլ հատվածում հիշատակվում է ինչ-որ այլ խմբի առնչությամբ (*ú-ni*¹⁰ pu-ru-nu-ur-di-ni-ni)⁴⁹: Թեեւ տեքստը թե՛ պակասավոր լինելու եւ թե՛ օգտագործված անսովոր բառապաշարի պատճառով հնարավոր չէ թարգմանել, բայց ակնհայտ է, որ այն ներկայացնում է ինչ-որ ծեսի մանրամասն նկարագրություն, որի ժամանակ օգտագործվում էր «գարի» (^{ŠAMŠE})⁵⁰, «միս» (^{UZU}hušw)⁵¹, «սիրտ» (^{tišni})⁵², «յուղ/ճարպ» (^I)⁵³, թերեւս նաեւ՝ «հաց» (NINDA)⁵⁴ եւն⁵⁵:

⁴³ ՀԱԲ, հ. 1, էջ 558-559. H. K. Martirosyan, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, էջ 214-215:

⁴⁴ T. V. Gamkrelidze, V. V. Ivanov, նշվ. աշխ., էջ 558. J. P. Mallory, D. Q. Adams, The Oxford Introduction to Proto-Indo-European and Proto-Indo-European World, Oxford, 2006, էջ 83, 166-167, 520:

⁴⁵ E. Lipiński, Semitic Languages. Outline of a Comparative Grammar, "Orientalia Lovaniensia Analecta", vol. 80, Leuven, 1997, էջ 560-561.

⁴⁶ KYKH 273₈. CTU I, A 9-11₈.

⁴⁷ KYKH 193₈. CTU I, A 8-14₈.

⁴⁸ KYKH 193₉. CTU I, A 8-14₉.

⁴⁹ KYKH 193₁₁. CTU I, A 8-14₁₁.

⁵⁰ KYKH 193₃. CTU I, A 8-14₃.

⁵¹ KYKH 193₄. CTU I, A 8-14₄.

⁵² KYKH 193₁₀. CTU I, A 8-14₁₀.

⁵³ F. W. König, Handbuch der chaldäischen Inschriften, I-II, „Archiv für Orientforschung“, Beiheft 8, Teil I-II, Graz, 1957, էջ 111 (Nr. 98 A+B₄). KYKH 193₄, ծնթ. 10. Հմմտ. CTU I, A 8-14₄:

⁵⁴ F. W. König, նշվ. աշխ., 1957, էջ 112 (Nr. 98 A+B₁₀). Հմմտ. KYKH 193₁₀, ծնթ. 20. CTU I, A 8-14₁₀.

⁵⁵ Տես նաեւ *barzani zieldi* բառերը, որոնք ավանդաբար թարգմանվել են որպես «թոք (և) լյարդ» (Ն. Վ. Հարությունյան, Նոր դիտարկումներ ուրարտական արձանագրություններում, ՄԱԵԺ, պրակ 27, Երևան, 2009, էջ 42-45): Բոլորովին այլ ընթերցման համար տես ի հմմտ. Ch. Girbal, Urartäische *barzani zelde*, "Altorientalische Forschungen", Bd. 37/1, Berlin, 2010, էջ 153 եւ հաջորդիվ:

Անկասկած է, որ ծիսակատարություն անբաժան մասն էր կազմելու գինին: Մինչդեռ, գինի բառը գաղափարագիր տարբերակով տեքստում չի հանդիպում: Դա կարող է հուշել, որ գինին վկայված էր լինելու հնչյունագիր, իսկ այդ դերին լավագույնս համապատասխանում է վերը նշված *ú-ni* -ն:

Հայտնի է, որ *ú*- սեպանշանն ունի նաեւ *'u* (= *wa*) նշանակությունը⁵⁶, ընդ որում, ուրարտական տեքստերում մենք ունենք *ú*- սեպանշանի *wa* ընթերցման առկազն մի քանի դեպք: Օրինակ, *LÚ taršuwani* բառը («մարդ»⁵⁷, հմմտ. խոռ. *LÚ taršuwani*-ն «մարդ»⁵⁸) ուրարտական տեքստերում հանդիպում է գրություն տարբեր ձևերով, այդ թվում՝ *LÚ ta-ar-šú-a-ni*^(MES), *LÚ ta-ar-šú-ú-a-ni*^(MES) եւ *LÚ ta-ar-šú-ú-'a-(a)-ni(-e)*⁵⁹: Վերջին գրության մեջ *'a* (= *wa*) նշանի առկայությունը (ըստ այդմ *LÚ taršuwani*) հուշում է, որ *LÚ ta-ar-šú-ú-a-ni* գրության մեջ *wa* նշանակությամբ կիրառվել է *ú*-ն (*'u*): Հետեւաբար, այստեղ նույնպես գրված է *LÚ taršuwani*: Այդ նույնը կարելի է ասել ուրարտ. «եւ» շաղկապի դեպքում (հմմտ. *e-ú-e* եւ *e-'a*⁶⁰ գրեկաձևերը, ըստ այդմ՝ *e-wa/we-e* եւ *e-wa*), Վարուբանի դիցանվան գրության համար (հմմտ. *ú-a-ru-ba-ni-e* եւ *ú-a-ru-ba-i-ni-e* գրեկաձևերը⁶¹) եւն:

Եթե մեզ հետաքրքրող օրինակներում իրոք գործ ունենք *wa-ni* տառարձություն հետ (կարդա՝ *wanə*), ապա այդ բառը կարող էր կա՛մ արտացոլել նախասեմական **wain* նախաձևից ածանցված մի ձև՝ *wanə* < **wa(i)nə* (?) < **wain* անցումով, կա՛մ ներկայացրել է տարածաշրջանի հին լեզուներում վկայված գինի բառին մոտ մեկ այլ ձև, եթե ընդունենք, որ *'u* սեպանշանը *wa* նշանակությունից բացի ունեցել է նաեւ *wi*, *we*, *wu*, *wo* բազմահնչյուն արժեքները (*wV_x*)⁶²: Այդ դեպքում, մենք կարող ենք Քա-

⁵⁶ R. Borger, Assyrisch-babylonische Zeichenliste, „Alter Orient und Altes Testament“, Bd. 33, Neukirchen-Vluyn, 1978, էջ 129 (No. 318).

⁵⁷ I. M. Diakonoff, Hurrisch und Urartäisch, „Münchener Studien zur Sprachwissenschaft“ N. F., Beiheft 6, München, 1971, էջ 47, 61-62. M. Salvini, I. Wegner, նշվ. աշխ., էջ 78, 114.

⁵⁸ I. Wegner, Einführung in die hurritische Sprache, Wiesbaden, 2007, էջ 284.

⁵⁹ Տեքստային հղումների համար տե՛ս M. Salvini, Corpus dei testi urartei, vol. II (այսուհետև՝ CTU II), Le iscrizioni su pietra e roccia. Thesaurus, „Documenta Asiana“, VIII/2, Roma, 2008, էջ 209-210.

⁶⁰ Տեքստային հղումների համար տե՛ս, համապատասխանաբար, CTU II, էջ 76 եւ հաջորդիվ, 87-88:

⁶¹ Տեքստային հղումների համար տե՛ս, համապատասխանաբար, CTU II, էջ 261-262, 291:

⁶² M. N. van Loon, The Euphrates mentioned by Sarduri II of Urartu, in: K. Bittel (ed.), Anatolian Studies Presented to Hans Gustav Güterbock on the Occasion of His 65th Birthday, Istanbul - Leiden, 1974, էջ 193. I. M. Diakonoff, On Some New Trends in Urartian Philology..., էջ 84. Տե՛ս նախ՝ First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia, „Annual of Armenian Linguistics“, vol. 13, Cleveland, 1992, էջ 52. M. Khachikyan, Notes on Hurro-

լրաթաշի եւ Արգիշտիխինիլի տեքստերի $\acute{u}/u$ -ni-ն (wV_x -ni/ə) տառադարձել, օրինակ, որպէս *wi-ni*, որի ամենամոտ զուգահեռը կարող է լինել սեպ. լուվ. *wini(ya)*-ն: Մյուս կողմից, ուրարտերենին համաժամանակյա հիեր. լուվ. աղբյուրներում վկայված *wa/iyani* ձեւը⁶³, որն ավելի շուտ ունենալու էր «խաղողի որթ» իմաստը (հմտ. հիեր. լուվ. *matu(sa)*-ն եւ սեպ. լուվ. *maddu*-ն՝ «գինի»)՝⁶⁴, նվազ հավանական է դարձնում ուրարտ. բառի լուվ. վիական փոխառութիւնը լինելու հնարավորութիւնը⁶⁵:

Իսկ եթե $\acute{u}/u$ -ni-ն արտահայտել է *we/wo-ni* ձեւը, ապա այդ դեպքում այն, միգուցե, արտացոլել է գինի բառի հնագույն հայ. **we/oi(H)ni*-o- ձեւը⁶⁶՝ ուրարտերենում ձայնավորից հետո եկող *-i-* հնչյունի բնորոշ սղմամբ, հմտ. ^{KUR}*biaina*- եւ ^{KUR}*biana*- գրելաձեւերն արքայական տիտղոսաշարի բանաձեւերում⁶⁷:

Այսպիսով, ի դեմս սեպ. $\acute{u}$ -ni (wV_x -ni/ə) բառի մեզ հնարավոր է թվում վերականգնել ուրարտ. «գինի» բառը: Ինչ խոսք, միանշանակ պնդել այս հնարավորութիւն վրա առաջիմ մենք չենք կարող. առկա նյութը, այնուամենայնիվ, դեռեւս սուղ է թվում՝ վստահ լինելու համար:

РЕЗЮМЕ

Несмотря на то, что во многих языках слова “виноград” и “вино” синонимичны, как, например, акк. *ka/irānu*, которое обозначает и “вино”, и “виноград”, и “виноградник”, ни одно из слов *ḫaluli* (“виноград, виноградная лоза”), ^(GIŠ)*uldi* (= ^{GIŠ}*udulī(?)*)/^{GIŠ}GEŠTIN (“виноградная лоза, виноградник”), словоформа ^{GIŠ}*urtani* (“виноградная лоза, саженец винограда”), часто встречающиеся в урартских текстах, не претендует на то, чтобы выразить смысл слова “вино” в урартском языке. Кажется, что в урартских текстах слово “вино” определено засвидетельствовано только идеограммой GEŠTIN^(MES). Как известно, во многих языках древней Передней Азии слово “вино” имеет так называемое “средиземноморское” или, что вероятнее, общее индоевропейское происхождение (см. Протоиндоевропейские

Urtian Phonology and Morphology, “Altorientalische Forschungen”, Bd. 36/2, Berlin, 2009, էջ 238-239.

⁶³ J. D. Hawkins, Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions, vol. I. Inscriptions of the Iron Age, Parts 1-3. “Studies in Indo-European Language and Culture”, vol. 8.1, Berlin - New York, 2000, էջ 468.

⁶⁴ J. D. Hawkins, նշվ. աշխ., էջ 477:

⁶⁵ «Բիաինի» երկրանվան հնարավոր կապի համար խեթ. *uiiana*- բառի հետ եւ դրա հնարավոր ստուգաբանությունն իրրել «գինի» տե՛ս Ս. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 187-188:

⁶⁶ H. K. Martirosyan, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, էջ 214.

⁶⁷ MAN DAN-NU MAN ^{KUR}*bi-a-i-na-ú-e* եւ MAN DAN-NU MAN ^{KUR}*bi-a-na-ú-e*: Համապատասխանաբար՝ КΥΚΗ 117₅, СТУ I, A 5-32₅, КΥΚΗ 180₈, СТУ I, A 8-11₈: Սրա վրա մեր ուշադրությունը հրավիրեց Արմեն Պետրոսյանը, ում եւ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

праформы **w(e/o)in-o*, **wóinom* и семитское **wain*). Естественно было бы предположить, что в хуррито-урартском языках оно также должно иметь сходство с одним из засвидетельствованных древних форм слова “вино”. Доказано, что в урартской клинописи клинописный знак *ú-* (= *'u/wa-*) выражал полифоническое значение *wVx-*. Следовательно, можно предположить, что слово *ú-ni* (*wVx-ni/ə*) (читай: *wa-ni/ə* (?), *wi-ni/ə* (?), *we/wo-ni/ə* (?)) и т.д.), которое встречается в двух урартских клинописных надписях, одно из которых повествует о закладке виноградника, а другое детально описывает какой-то ритуал, может обозначать “вино”, исходя из одной из засвидетельствованных в древних региональных языках форм слова “вино”, какой может быть, например, праформа арм. слова զիւի “вино” - **we/oi(H)no-*.

SUMMARY

While in many languages the words for ‘grape’ and ‘wine’ are identical, as, for example, *ka/irānu* in Akkadian, which means ‘wine’, ‘grape’, and ‘vine(yard)’ simultaneously, none of the words *haluli* (‘grape’, ‘vine’), ^(GIS)*uldi* (= ^(GIS)*uduli*^(?))/^(GIS)*GĒŠTIN* (‘vine’, ‘vineyard’) and ^(GIS)*urtani* (‘vine’, ‘grapevine’) appearing frequently in Urartian texts is a candidate for the meaning for ‘wine’ in Urartian language. It seems, that the word for ‘wine’ is clearly attested only in its logographic form - *GĒŠTIN*^(MES). As it is known, in many ancient Near-Eastern languages the word for ‘wine’ had common, the so-called “Mediterranean” or, which is more likely, Indo-European background (cf. Proto-Indo-European **w(e/o)in-o* or **wóinom* and Proto-Semitic **wain*). It is reasonable to think that in Hurro-Urartian languages it also must be close to one of the attested ancient forms of the word for ‘wine’. It is well-grounded the opinion, according to which in Urartian cuneiform texts the sign *ú-* (= *'u/wa-*) could have polyphonic values (*wVx-*). Accordingly it seems possible that the word *ú-ni* (read *wa-ni/ə* (?), *wi-ni/ə* (?), *we/wo-ni/ə* (?), etc.) attested in two Urartian inscriptions in connection with planting of a vineyard and in a long text describing in detail a festival/ceremony, may mean ‘wine’. Its form shows similarity to any of the forms of the word for ‘wine’ attested in the ancient languages of the region, amongst them, as a possibility, **we/oi(H)no-* - the ancient form of the Armenian word for ‘wine’ - *qihui*.

